

Հաստատված է
Գործադիր Կոմիտեի կողմից
23 մայիսի 2011թ.

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՊԱԼԱՏ

Բովանդակություն

| | |
|---|----|
| Ա. Ընդհանուր դրույթներ..... | 5 |
| Հոդված 1 ՎԼՊ իրավասություն..... | 5 |
| Հոդված 2 Կիրառվող օրենքներ..... | 5 |
| Բ. Ղեկավար մարմին..... | 5 |
| Հոդված 3 Կառուցվածք..... | 5 |
| Հոդված 4 Իրավասություն..... | 6 |
| Հոդված 5 Նստավայր..... | 6 |
| Հոդված 6 Անհամատեղելիություն..... | 6 |
| Հոդված 7 Դատավարության հիմնական սկզբունքները և լեզուն..... | 6 |
| Հոդված 8 Գաղտնիության պարտավորություն..... | 6 |
| Հոդված 9 Ինքնաբացարկներ և բացարկներ..... | 6 |
| Հոդված 10 Որոշումներ բացարկների վերաբերյալ..... | 7 |
| Գ. Կողմեր..... | 7 |
| Հոդված 11 Կողմերի բնույթ..... | 7 |
| Հոդված 12 Հիմնական դատավարական իրավունքներ..... | 7 |
| Հոդված 13 Ներկայացուցչություն..... | 8 |
| Գործերի վարումը ներկայացուցիչների միջոցով..... | 8 |
| Դ. Փաստաթղթեր և Ժամկետներ..... | 8 |
| Հոդված 14 Դատավարության ձև..... | 8 |
| Հոդված 15 Փաստաթղթերի տրամադրում..... | 9 |
| Հոդված 16 Ժամկետների պահպանում..... | 9 |
| Հոդված 17 Ժամկետների հաշվարկը, սկիզբը և ավարտը..... | 9 |
| Հոդված 18 Ժամկետների երկարացում ու վերանայում..... | 9 |
| Հոդված 19 Դիմումներ..... | 10 |
| Ե. Ապացույցների ընդունում և ելույթներ..... | 10 |
| Հոդված 20 Դատաքննություն և արձանագրություններ..... | 10 |
| Հոդված 21 Ապացույցներ..... | 11 |
| Հոդված 22 Կողմերի` միմյանց հետ համագործակցելու պարտավորություն..... | 12 |
| Հոդված 23 Ներկայանալու պարտավորություն..... | 12 |
| Հոդված 24 Վկաների հարցաքննություն..... | 12 |

| | |
|--|-----------|
| Հոդված 25 Փորձագետների զեկույցներ..... | 12 |
| Հոդված 26 Ապացույցի տրամադրում | 13 |
| Հոդված 27 Դատաքննության ավարտ..... | 13 |
| Հոդված 28 Ելույթներ | 13 |
| Զ. Դատավարություն | 13 |
| Հոդված 29 Քննարկումներ | 13 |
| Հոդված 30 Որոշումների ձև և բովանդակություն | 14 |
| Հոդված 31 Որոշումների ծանուցում | 14 |
| Հոդված 32 Դատավարության ծախսեր..... | 14 |
| Հոդված 33 Հրապարակում | 14 |
| Հոդված 34 Բողոքարկում..... | 14 |
| Է. Եզրափակիչ դրույթներ..... | 15 |
| Հոդված 35 Պատասխանատվության բացառում | 15 |
| Հոդված 36 Անցումային դրույթներ | 15 |

Նախաբան

Համաշխարհային ֆուտբոլային բուրգի հիմքում ընկած է մեր սպորտաձևի երկու կարևորագույն տարր՝ ֆուտբոլիստները, որոնք դրսևորում են իրենց հմտությունները դաշտում և ակումբները, որոնք համախմբում են ֆուտբոլիստներին թիմերում՝ հնարավորություն ընձեռելով ասոցիացիաներին և լիգաներին կազմակերպել մրցումներ/մրցաշարեր:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլում ակումբների և ֆուտբոլիստների միջև հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային պայմանագրով, և ինչպես հասարակության մնացյալ շերտերի մոտ, այնպես էլ ֆուտբոլում այդ հարաբերությունները կարող են հանգեցնել վեճերի:

Վեճերի Լուծման Պալատը՝ ակումբների և ֆուտբոլիստների հավասար ներկայացուցչության սկզբունքով ստեղծված իրավական մարմին է, որի հիմնական նպատակն է ապահովել նշված սուբյեկտների միջև ծագած վեճերի գնահատման և լուծման արագ և արդյունավետ համակարգը:

Ա. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1 ՎԼՊ իրավասություն

Վեճերի լուծման պալատը՝ ակումբի և Ֆուտբոլիստի միջև աշխատանքային կամ պայմանագրային հարաբերություններից բխող, ինչպես նաև ՀՖՖ ակումբների միջև մարզումային փոխհատուցման և համերաշխության մեխանիզմի հետ կապված վեճերը լուծող մարմին է:

Հոդված 2 Կիրառվող օրենքներ

ՎԼՊ-ն Իր իրավասության շրջանակներում կիրառում է ՖԻՖԱ-ի կանոնադրության և կանոնակարգերի հիման վրա ընդունված ՀՖՖ կանոնադրությունն ու կանոնակարգերը: ՀՖՖ համապատասխան կանոնակարգերի բացակայության դեպքերում, համանմանությամբ /անալոգիայով/ կիրառվում են ՖԻՖԱ-ի կանոնադրությունն ու կանոնակարգերը:

ՎԼՊ-ն իր իրավասությունն իրականացնելիս ղեկավարվում է նաև ՀՀ օրենսդրությամբ, կնքված պայմանագրերով և համաձայնագրերով՝ հաշվի առնելով սպորտի առանձնահատկությունները:

Բ. Ղեկավար մարմին

Հոդված 3 Կառուցվածք

ՎԼՊ-ն կազմված է քառամյա ժամկետով ընտրված հետևյալ անդամներից՝
ա. Ֆուտբոլիստների և ակումբների ներկայացուցիչների կողմից փոխհամաձայնությամբ ընտրված նախագահից և փոխնախագահից, որոնք ընտրվում են ՀՖՖ գործադիր կոմիտեի կողմից կազմած, առնվազն 5 անձից բաղկացած ցուցակից:

բ. Ֆուտբոլիստների ներկայացուցիչներից (թվով՝ 3), որոնք ընտրվում կամ նշանակվում են ՀՖՖ անդամ ակումբների բարձրագույն խմբում հանդես եկող թիմերի ֆուտբոլիստների կողմից՝ ՖԻՖԱ-ի հետ համաձայնեցված ընթացակարգով:

գ. ակումբների ներկայացուցիչներից (թվով՝ 3), որոնք ընտրվում կամ նշանակվում են ՀՖՖ ակումբների կամ լիգաների առաջարկությամբ:

ՎԼՊ նախագահն ու փոխնախագահը պետք է ունենան բարձրագույն իրավաբանական կրթություն:

ՎԼՊ-ի կազմում միննույն ակումբը չի կարող ներկայացված լինել ավելի քան մեկ անդամով:

ՎԼՊ-ն նիստ է գումարում առնվազն 3 անդամների ներկայությամբ՝ ներառյալ նախագահի կամ փոխնախագահի: Բոլոր դեպքերում նիստը գումարող կազմը պետք է բաղկացած լինի ակումբների և ֆուտբոլիստների հավասար թվով ներկայացուցիչներից:

Հողված 4 Իրավասություն

ՎԼՊ-ն պաշտոնապես գործում է սույն կանոնակարգով, ինչպես նաև ՖԻՖԱ-ի և ՀՖՖ կանոնադրություններով և կանոնակարգերով վերապահված իրավասությունների շրջանակում:

Այն դեպքերում, երբ ՎԼՊ-ն իրեն համարում է ոչ իրավասու, այն ի պաշտոնե և անհապաղ գործն ուղարկում է իրավասու մարմնին,՝ այդ մասին անմիջապես տեղյակ պահելով կողմերին:

Հողված 5 Նստավայր

ՎԼՊ դատավարությունը տեղի է ունենում ՀՖՖ նստավայրում, եթե առկա չէ այլ վայրում այն անցկացնելու մասին ՎԼՊ որոշում :

Հողված 6 Անհամատեղելիություն

ՎԼՊ անդամները չեն կարող լինել ՀՖՖ գործադիր մարմնի անդամներ:

Հողված 7 Դատավարության հիմնական սկզբունքները և լեզուն

ՎԼՊ կողմից դատավարությունն իրականացվում է օրենքի և ՎԼՊ առջև՝ կողմերի հավասարության, ինչպես նաև կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների հիման վրա:

Դատավարությունը տարվում է հայերեն լեզվով:

Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատավարության ընթացքում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը:

Հողված 8 Գաղտնիության պարտավորություն

ՎԼՊ անդամները պաշտոնապես պարտավոր են գաղտնի պահել բոլոր այն փաստերը, որոնց մասին տեղեկանում են իրենց պարտականությունները կատարելիս:

Մասնավորապես, նրանք պետք է խուսափեն քննարկումների բովանդակությունը հրապարակելուց:

Հողված 9 Ինքնաբացարկներ և բացարկներ

ՎԼՊ անդամը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմանակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են ի թիվս այլոց այն դեպքերը, երբ՝

ՎԼՊ անդամը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ ներառյալ երբ նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որպես ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի ներկայացուցիչ՝ շահագրգիռ կողմ է հանդիսանում վեճում:

ՎԼՊ անդամը՝ որպես մասնավոր անձ, ականատես է եղել այն փաստերին, որոնք

վիճարկվում են դատաքննության ընթացքում.

ներգրավված է նրա ակումբը կամ գործին մասնակցող անձինք հանդիսանում են ՎԼՊ անդամի կամ նրա ամուսնու մերձավոր ազգականները, ինչպես նաև երբ առկա են կախյալ հարաբերություններ, մոտ ընկերություն կամ անձնական թշնամանք կողմերից մեկի հետ:

Սույն կետի իմաստով մերձավոր ազգականներ են՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը.:

ՎԼՊ անդամը, որը ինքնաբացարկ է հայտնել, պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը: Ինքնաբացարկ հայտնած անդամը, եթե համարում է, որ ինքը կարող է տվյալ գործով լինել անկողմնակալ, կարող է դիմել կողմերին՝ առաջարկելով իր բացակայությամբ քննարկելու ինքնաբացարկի անտեսման հարցը: Եթե կողմերը տվյալ անդամի բացակայությամբ որոշում են կայացնում ինքնաբացարկը անտեսելու մասին, ապա այդ որոշումն արձանագրելուց հետո ՎԼՊ անդամը իրականացնում է գործի դատաքննությունը:

Կողմերը կարող են բացարկ հայտնել ՎԼՊ անդամին՝ անդամի անկողմնակալության և/կամ անկախության վերաբերյալ հիմնավորված կասկածի դեպքում: Յուրաքանչյուր կողմ, ով ցանկանում է բացարկ հայտնել ՎԼՊ ինչ-որ անդամին, գրավոր դիմում է ներկայացնում ՎԼՊ՝ բացարկի հիմքերի մասին տեղեկանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում: Ժամկետի բացթողման դեպքում կողմը զրկվում է վերոնշյալ իրավունքից: Դիմումը պետք է լինի հիմնավորված, որին պետք է կցված լինեն համապատասխան ապացույցներ:

Հոդված 10 Որոշումներ բացարկների վերաբերյալ

Եթե ՎԼՊ անդամը վիճարկում է բացարկը, ՎԼՊ-ն որոշում է կայացնում նրա բացակայությամբ:

Եթե բացարկը բավարարվում է դատավարության ընթացքում, ապա դատավարության այն փուլը, որին մասնակցել է բացարկվող անձը, համարվում է անվավեր:

Բացարկների վերաբերյալ որոշումները ուժի մեջ են մտնում հրապարակման պահից և ենթակա չեն բողոքարկման:

Գ. Կողմեր

Հոդված 11 Կողմերի բնույթ

Դատավարության կողմերն են դիմողը և պատասխանողը:

Դիմողներ են այն ֆուտբոլային սուբյեկտները, որոնք դիմում են ներկայացրել:

Պատասխանողներ են այն ֆուտբոլային սուբյեկտները, որոնց դեմ դիմում է ներկայացվել:

Կողմերն ունեն հավասար դատավարական իրավունքներ և կրում են հավասար դատավարական պարտականություններ:

Հոդված 12 Հիմնական դատավարական իրավունքներ

Գործին մասնակցող կողմերն իրավունք ունեն՝ ծանոթանալ գործի նյութերին.

հայտնել բացարկներ.

ներկայացնել ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը.

հարցեր տալ, միջնորդություններ անել, բացատրություններ տալ.

գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց փաստարկները. առարկել գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների, փաստարկների դեմ. բողոքարկել ՎԼՊ որոշումները սույն կանոնակարգով սահմանված կարգով. օգտվել սույն կանոնակարգով իրենց վերապահված այլ դատավարական իրավունքներից:

Գործին մասնակցող կողմերը կրում են սույն կանոնակարգով սահմանված դատավարական պարտականություններ:

Գործին մասնակցող կողմերը պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

Հոդված 13 Ներկայացուցչություն

Գործերի վարումը ներկայացուցիչների միջոցով

Կողմերը կարող են ՎԼՊ-ում իրենց գործերը վարել անձամբ կամ իրենց

ներկայացուցիչների միջոցով: Ֆիզիկական անձի մասնակցությունը գործին չի գրկում նրան՝ գործով ներկայացուցիչ ունենալու իրավունքից:

Իրավաբանական անձանց գործերը վարում են օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում գործող նրանց մարմինները կամ ներկայացուցիչները:

Իրավաբանական անձանց ղեկավարները կամ նրանց կանոնադրությանը համապատասխան՝ իրավաբանական անձի շահերը ներկայացնելու իրավունք ունեցող այլ անձինք ՎԼՊ-են ներկայացնում իրենց պաշտոնական կարգավիճակը կամ լիազորությունները հավաստող փաստաթղթեր:

ՎԼՊ-ում ներկայացուցիչ կարող է լինել ցանկացած քաղաքացի, որն ունի ՎԼՊ-ում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն:

Քաղաքացուն տված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

Կազմակերպության անունից լիազորագիրը տրվում է նրա գործադիր մարմնի ղեկավարի կամ կանոնադրությամբ կազմակերպությունը առանց լիազորագրի ներկայացնելու իրավասություն ունեցող անձի ստորագրությամբ՝ կազմակերպության կնիքի դրոշմամբ:

Դատավարությանը ներկայացուցչի հետ մասնակցող կողմն իրավունք ունի իր ներկայացուցչի լիազորությունները հաստատելու դատարանի առջև՝ գրավոր սահմանելով վերջինիս լիազորությունների ծավալը:

Օրինական ներկայացուցչի լիազորությունները հաստատվում են իր կարգավիճակը հավաստող փաստաթղթով:

Դ. Փաստաթղթեր և ժամկետներ

Հոդված 14 Դատավարության ձև

Դատավարությունը ընթանում է հիմնականում գրավոր:

ՎԼՊ-ն անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրել բանավոր լսումներ:

Հոդված 15 Փաստաթղթերի տրամադրում

Փաստաթղթերը՝ ներառյալ ծանուցումները, տրամադրվում են կողմերի ներկայացրած գտնվելու վայրի կամ էլեկտրոնային փոստի հասցեով: Դրանք կարող են նաև տրամադրվել կողմերի ներկայացուցիչներին: Փաստաթղթերի տրամադրումը հաստատվում է ստացականով, փոստային անդորրագրով կամ այլ հավաստմամբ: Կողմերը կրում են պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված փաստաթղթերը չկարդալու անբարենպաստ հետևանքները:

Հոդված 16 Ժամկետների պահպանում

Կողմերը ներկայացնում են իրենց փաստաթղթերը ՎԼՊ կողմից հաստատված ժամկետներում: Ժամկետը համարվում է պահպանված այն դեպքում, եթե փաստաթղթերը ներկայացվել են ոչ ուշ քան ժամկետի վերջին օրը (վերջին օրվա կեսգիշերը) և եթե դրանց ստացումը հաստատվել է ՀՖՖ քարտուղարության ստացականով, փոստային անդորրագրով կամ այլ հավաստմամբ:

Փաստաթղթեր ներկայացնողը պարտավոր է ապացույց ստանալ այն մասին, որ ժամկետը պահպանվել է:

Որպես կանոն՝ ՎԼՊ կողմից հաստատված ժամկետները պետք է լինեն 10 օրից ոչ պակաս և 20 օրից ոչ ավել: Հրատապ դեպքերում ժամկետները կարող են նվազեցվել մինչև 24 ժամ: Այն դեպքերում, երբ սույն կանոնակարգը չի նախատեսում ժամկետների բացթողնման հետևանքներ, դրանք որոշվում են ՎԼՊ կողմից:

Հոդված 17 Ժամկետների հաշվարկը, սկիզբը և ավարտը

Դատավարական գործողություններ կատարելու համար ժամկետները որոշվում են օրացուցային ստույգ տարով, ամսով, ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածով, որի ընթացքում գործողությունը կարող է կատարվել:

Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվվող դատավարական ժամկետի ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա սկիզբը:

Տարիներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին: Ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Եթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջը համընկնում է այնպիսի ամսվա, որը համապատասխան ամսաթիվ չունի, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Դատավարական գործողությունը կարող է կատարվել մինչև սահմանված ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

Հոդված 18 Ժամկետների երկարացում ու վերանայում

Սույն կանոնակարգով հաստատված պարտադիր ժամկետները չեն կարող փոփոխվել: Սույն կանոնադրությամբ և ՎԼՊ լիազորությամբ սահմանված ժամկետները կարող են երկարացվել հիմնավոր պատճառների առկայության դեպքում, եթե համապատասխան

հիմնավորված միջնորդությունն արվել է մինչև ժամկետների սպառվելը: Ժամկետների երկարացման վերաբերյալ միջնորդությունը ներկայացվում է մեկ անգամ: Եթե կողմը կամ ներկայացուցչը ժամկետները բաց են թողել իրենց կամքից անկախ պատճառներով, ապա ժամկետները կարող են վերանայվել միջնորդությունը ստանալուն պես երեք օրվա ընթացքում:

Հոդված 19 Դիմումներ

Կողմերը պետք է դիմումները ներկայացնեն հայերեն լեզվով, նշելով՝ գործին մասնակցող կողմերի անունը, ազգանունը, հայրանունը (այսուհետ՝ անուն), իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, հանգամանքները, որոնց վրա հիմնվում են պահանջները. /փաստերի հակիրճ նկարագիրը/, նրանց եզրակացությունները, պահանջի իրավական հիմքերը, պահանջները հաստատող ապացույցները. (վեճին վերաբերող բնօրինակ փաստաթղթերը, գործում տարբեր մակարդակներով ներգրավված ֆիզիկական և իրավաբանական անձանց անուններն ու հասցեները և այլն) և ապացույցների վերաբերյալ իրենց առաջարկությունները; հայցագիւնը, եթե պահանջը ենթակա է գնահատման կրոնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը. դիմողի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ դիմում ներկայացնելիս, դիմողի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները. դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Դիմումում կարող են նշվել նաև այլ տեղեկություններ, եթե դրանք անհրաժեշտ են վեճի ճիշտ լուծման համար, ինչպես նաև դիմողի միջնորդությունները: Դիմումն ստորագրում է դիմողը կամ նրա կողմից դրա համար լիազորված ներկայացուցիչը: Դիմումները պետք է ունենան ամսաթիվ, և ներկայացվեն կրկնօրինակով: ՎԼՊ-ն ստացված դիմումը գրանցում է համապատասխան գրանցամատյանում: Յուրաքանչյուր դիմում, որն ներկայացվել է սույն կետի պահանջների խախտումներով ենթակա է վերադարձման: Առկա թերությունները վերացնելու և կրկին դիմում ներկայացնելու համար ժամանակահատվածը որոշվում է ՎԼՊ կողմից, որը չպահպանելու դեպքում դիմումի ընդունումը ենթակա է մերժման: Դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետոայն ուղարկվում է մյուս կողմին և շահագրգիռ այլ անձանց, որոնք կարող են ՎԼՊ կողմից որոշված ժամկետներում գրավոր ներկայացնել իրենց դիրքորոշումը ներկայացված դիմումի վերաբերյալ: Մահմանված ժամկետներում գրավոր դիրքորոշում չներկայացնելու դեպքում, որոշումն ընդունվում է առկա փաստաթղթերի հիման վրա: Նամակագրության երկրորդ փուլը հնարավոր է միայն հատուկ դեպքերում, որոնք որոշվում են ՎԼՊ կողմից:

Ե. Ապացույցների ընդունում և ելույթներ

Հոդված 20 Դատաբանություն և արձանագրություններ

Մինչև որոշման կայացումը, բանավոր լսումների անհրաժեշտության դեպքում, ՎԼՊ-ն կարող է կողմերին հրավիրել դատաքննության:

Դատաքննության օրը նշանակելուց անմիջապես հետո, նախագահը արձանագրություններ կազմելու նպատակով նշանակում է պատասխանատու անձ/քարտուղար/:

Արձանագրություններ վարելու համար կարող է նշանակվել «արտաքին քարտուղար», ով ունի նույն պարտականություններն, ինչ որոշում կայացնող մարմնի անդամները, մասնավորապես գաղտնիության պահպանմանը վերաբերող պարտականությունները:

Դատավարության դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատավարության ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով:

Համառոտագրումը դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են:

Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգի բացակայության դեպքում կամ դատավարությունից դուրս առանձին դատավարական գործողություններ կատարելիս արձանագրությունը վարվում է պարզ թղթային արձանագրման եղանակով:

Պարզ թղթային արձանագրությունը նիստի ժամանակ վարվում է գրավոր կամ համակարգչի միջոցով: Այն գործի նյութերին կցվում է՝ հավաստված նախագահի և քարտուղարի ստորագրությամբ: Պարզ թղթային արձանագրությունները պետք է կազմվեն և ստորագրվեն ողջամիտ ժամկետում:

Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգով արձանագրություն վարելիս դրա համառոտագրումը կատարվում է միաժամանակ՝ համակարգչային եղանակով: Ձայնային արձանագրությունը գործի նյութերին կցվում է լազերային կրիչի վրա:

Դատավարության մասնակիցներն իրավունք ունեն ծանոթանալու պարզ թղթային եղանակով կազմված դատական նիստի արձանագրությանը և երօրյա ժամկետում դիտողություններ ներկայացնելու այն կազմելու լրիվության կամ ճշտության վերաբերյալ: Արձանագրության վերաբերյալ դիտողություններն ուսումնասիրում է արձանագրությունը ստորագրած նախագահը դրանք ներկայացնելու պահից երեք օրվա ընթացքում:

Արձանագրության վերաբերյալ դիտողություններն ընդունելու կամ մերժելու մասին նախագահը կայացնում է որոշում:

Հոդված 21 Ապացույցներ

ՎԼՊ-ն ուսումնասիրում է ապացույցները՝ կիրառելով հետևյալ մեթոդները՝

- ա. կողմերի հարցաքննություն,
- բ. վկաների հարցաքննություն,
- գ. փորձագետների զեկուՄցների գնահատում, դ. առկա ապացույցի ուսումնասիրություն,
- ե. այլ մեթոդներ, որոնք նա հարիր է համարում:

ՎԼՊ-ն գնահատում է ապացույցը այնքանով, որքանով այն համարում է համապատասխան, և որոշումը կայացնում է հիմնվելով ներքին համոզման վրա:

Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Անհրաժեշտության դեպքում ՎԼՊ-ն կարող է հաշվի առնել նաև կողմերի ներկայացրած ապացույցներից բացի այլ ապացույցներ:

Այն դեպքում, եթե ապացույցների ընդունումն առաջացնում է վկայությունների կամ փորձագետների զեկույցների հետ կապված ծախսեր, ծախսերը հոգում է դիմող կողմը: Ի պաշտոնե կամ կողմերից մեկի միջնորդությունով ՎԼՊ-ն կարող է հրաժարվել այն ապացույցների ընդունումից, որոնք նա համարում է ոչ վերաբերելի, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար ոչ անհրաժեշտ կամ, հակառակ դեպքում, դատավարությունն ավելորդ ձգձգող:

Հոդված 22 Կողմերի՝ միմյանց հետ համագործակցելու պարտավորություն

Կողմերը պարտավոր են ակտիվ համագործակցել փաստերի հաստատման գործում: Անհետևողականություն դրսևորելու դեպքում ՎԼՊ նախագահը զգուշացնում է կողմերին, որից հետո կարող է տուգանել նրանց ողջամիտ գումարի սահմաններում: Այն դեպքում, երբ կողմերը չեն համագործակցում, ՎԼՊ-ն որոշում է կայացնում առկա փաստաթղթերի հիման վրա:

Հոդված 23 Ներկայանալու պարտավորություն

ՀՖՖ կանոնադրությանը և կանոնակարգերին ենթակա բոլոր անձինք պարտավոր են ներկայանալ ՎԼՊ ծանուցագրերով՝ անկախ դրանցում նշված հիմքերից:

Միայն հետևյալ անձինք կարող են մերժել ծանուցագիրը՝

ա. կողմի ամուսինը/կինը և յուրաքանչյուր անմիջական բարեկամ կամ ամուսնական կապերով բարեկամ,

բ. պրոֆեսիոնալ կամ աշխատանքային գաղտնիքներով գործի հետ կապված յուրաքանչյուր անձ:

Հոդված 24 Վկաների հարցաքննություն

ՎԼՊ-ն նախ և առաջ ստուգում է վկաների ինքնությունը: ՎԼՊ-ն զգուշացնում է վկաներին կեղծ վկայություններ տալու հետևանքների մասին:

Վկաների հարցաքննությունը վարում է ՎԼՊ-ն: Վերջինս որոշում է ընդունում առաջադրված հարցերի հարիր լինելու վերաբերյալ, որից հետո միայն կողմերին հնարավորություն է ընձեռվում հարցաքննելու վկաներին՝ վկայությունները պարզաբանելու կամ ամբողջացնելու նպատակով:

Հարցաքննությունից հետո վկաները կարդում և ստորագրում են իրենց վկայությունները:

Հոդված 25 Փորձագետների զեկույցներ

Այն դեպքում, երբ մասնագիտական գիտելիք է պահանջվում կոնկրետ փաստեր հաստատելու կամ գնահատելու համար, ՎԼՊ-ն կարող է դիմել փորձագետի: Փորձագետն այնուհետև կազմում է գրավոր զեկույց ՎԼՊ կողմից հաստատված ժամկետում: Նա կարող է նաև վկայություն տալ հարցաքննության ժամանակ:

ՎԼՊ-ն կարող է ի պաշտոնե կամ որևէ կողմի միջնորդությամբ՝

ա. փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքերում նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով միննույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության):

բ. փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ ողջամիտ կասկածներ առաջանալու, ինչպես նաև մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայության դեպքում, նշանակել կրկնակի փորձաքննություն, դրա կատարումը հանձնարարելով մեկ այլ փորձագետի (փորձագետների, մասնագիտացված փորձագիտական հաստատության):

Բացարկյների վերաբերյալ դրույթները համանմանությամբ վերաբերում են նաև փորձագետներին:

Հոդված 26 Ապացույցի տրամադրում

ՎԼՊ-ն կարող է պարտադրել ՀՖՖ կանոնադրությանը և կանոնակարգերին ենթակա յուրաքանչյուր կողմին կամ երրորդ անձանց ներկայացնել իրենց տրամադրության տակ գտնվող և վեճին առնչվող ցանկացած ապացույց:

Կողմերն իրավունք ունեն ուսումնասիրել ապացույցները, եթե դրանք չեն պարունակում խիստ կոնֆիդենցիալ տեղեկություն: Եթե ՎԼՊ-ն չի թույլատրում կողմին ուսումնասիրել ապացույցը, ապա վերջինս կարող է կիրառվել տվյալ կողմի դեմ միայն այն դեպքում, եթե ՎԼՊ-ն տեղեկացրել է կողմին ապացույցի հիմնական բովանդակության մասին և հնարավորություն ընձեռել անելու համապատասխան մեկնաբանություններ:

Հոդված 27 Դատաքննության ավարտ

Ապացույցների ընդունումից անմիջապես հետո ՎԼՊ-ն հայտարարում է դատաքննությունը փակված: Այդ բոլորից սկսած կողմերը չեն կարող ներկայացնել նոր փաստեր կամ ապացույցներ:

Հոդված 28 Ելույթներ

Դատաքննության բանավոր լսումներին մասնակցող կողմը կարող է հանդես գալ իր գործի պաշտպանությամբ, որից հետո նախագահը հայտարարում է դատաքննության ավարտը:

Զ. Դատավարություն

Հոդված 29 Քննարկումներ

ՎԼՊ-ն որոշում է ընդունում պարզ մեծամասնությամբ փակ դատական նիստի ժամանակ: Ժողովին ներկա նախագահն ու մյուս անդամներն ունեն յուրաքանչյուրը մեկական ձայն: Բոլոր ներկա գտնվողները պարտավոր են քվեարկել: Եթե քվեները հավասար են, նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք: Որոշումը կարող է ընդունվել նաև նամակագրության միջոցով:

Հոդված 30 Որոշումների ձև և բովանդակություն

ՎԼՊ-ն որոշումը տրամադրում է գրավոր ձևով, որը նշվում է հետևյալը՝
ա. որոշման ընդունման ամսաթիվ,
բ. պալատի անդամների անուններ,
գ. կողմերի և նրանց ներկայացուցիչների անուններ, դ. կողմերի եզրակացություններ,
ե. փաստերի հիմնավորում և իրավունքի վերաբերյալ եզրակացություն, գ. որոշումը՝
ներառյալ ծախսերի ցանկացած բաշխում,
է. ՎԼՊ նախագահողի ստորագրությունը,
ը. Նշում առկա իրավական պաշտպանության միջոցների մասին (բողոքարկման կարգը և ժամկետները)՝ բողոքարկման ենթակա որոշումների դեպքում:

Հոդված 31 Որոշումների ծանուցում

Որոշումը կայացնելուց հետո ՎԼՊ-ն այն ուղարկում է ՀՖՖ քարտուղարությանը, որն անմիջապես այդ մասին գրավոր տեղեկացնում է կողմերին կամ նրանց ներկայացուցիչներին:
Հրատապ դեպքերում ՎԼՊ-ն կարող է ծանուցել կողմերին միայն որոշման եզրակացությունները և հաղորդել դրա հիմքերը հաջորդող 20 օրվա ընթացքում:
Կողմերը համարվում են որոշումը ստացած՝ փոստով կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով այն ստանալու պահից: Որոշման ծանուցումը կողմերի ներկայացուցիչներին նույնպես համարվում է վավեր:

Հոդված 32 Դատավարության ծախսեր

ՎԼՊ-ում ընթացող դատավարությունն անվճար է: Այն չի ենթադրում որևէ ընթացակարգային ծախսեր՝ բացառությամբ 21-րդ հոդվածի 5-րդ կետում ամրագրված դեպքերի:

Հոդված 33 Հրապարակում

Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող որոշումները կարող են հրապարակվել ՀՖՖ կողմից ՎԼՊ հաստատած ձևով, եթե ներգրավված կողմերի ինքնությունը գաղտնի է պահվել:

Հոդված 34 Բողոքարկում

Որպես վերջին ատյան, ՎԼՊ կողմից վեճն ըստ էության լուծող որոշումները կարող են բողոքարկվել՝ ՖԻՖԱ-ի կանոնակարգերի համաձայն ՀՖՖ կողմից ճանաչված ազգային արբիտրաժային դատարան, կամ նման դատարանի բացակայության դեպքում, անցողիկ շրջանի ընթացքում՝ Սպորտային Արբիտրաժային Դատարանին /CAS/:
Կողմերը կարող են ՎԼՊ կողմից վեճն ըստ էության լուծող որոշումն ղեմ բողոք ներկայացնել դրա հրապարակման պահից 21 օրվա ընթացքում:

Է. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 35 Պատասխանատվության բացառում

ՎԼՊ անդամներն ու քարտուղարությունն անհատապես պատասխանատվություն չեն կրում դատաքնության հետ կապված իրենց գործողությունների և բացթողումների համար՝ բացառությամբ եթե դրանք իրենց պարտականությունների լուրջ և կոպիտ խախտման հետևանք են:

Հոդված 36 Անցումային դրույթներ

Սույն կանոնակարգն հաստատվել է ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 23.05.2011թ.-ին: Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում 01.03.2012 թվականին որից հետո ցանկացած դատավարություն վարվելու է տվյալ կանոնակարգի համաձայն: